ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ЗДРАВООХРАНЕНИЯ РА
MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA

Վ.Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ անվան
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ

ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ, ՖԱՆԱՐՋՅԱՆ Փ. 76

АОЗТ НАЦИОНАЛЬНЫЙ ЦЕНТР
ОНКОЛОГИИ им. В. А. ФАНАРДЖЯНА

ЕРЕВАН, КАНАКЕР, ул. ФАНАРДЖЯНА, 76

CJsC NATIONAL CENTER OF ONCOLOGY
named after, V . A. FANARJIAN

76 FANARJIAN str. YEREV AN, KANAKER, ARMENIA

________ № 01/10-35

«19» 02 2015

Հեռ.` (3741) 28-69-62
Ֆաքս.` (3741) 28-69-22

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/13>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի
միջոցով գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/13 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԱՆ <<Վ" Ա" Ֆանարջյանի նավան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

**Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում** ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/13

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԱՆ <<Վ" Ա" Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ, ք. Երևան Ֆանարջյան փ" 76 շենք հասցեով, մինչև **2015թ. մարտի 3-ը, ժամը 13:00-ն**: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղարը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ՀՀ ԱՆ <<Վ. Ա. Ֆանարջյանի նավնան ուռուցքաբանության ազգային կենտրոբ>> ՓԲԸ, ք. Երևան Ֆանարջյան փ" 76 շենք հասցեով, **2015թ. մարտի 3-ին, ժամը 13:00-ին**:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ ԱՆ <<Վ" Ա" Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազագային կենտրոն>> ՓԲԸ -ի կարիքների համար՝ **Գրասենյակային և կենցաղային կահույքի ձեռքբերումը**:

ՀՀ ԱՆ <<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ -ի կարիքների համար՝ **Գրասենյակային և կենցաղային կահույքի մատակարարման** (որոնք կազմված են՝ —— չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) **N 10** հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. Գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (**Հավելված N 5** ), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն.

բ. Գնային առաջարկ (**Հավելված N 5.1** ): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել **ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8** ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՀՀ ԱՆ <<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ **nco.gnumner@gmail.com**:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին, ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Հարգանքով

ՏՆՕՐԵՆ Ա. ՏԱՆԱՆՅԱՆ